Ողջույն

Ձեզ գրում ենք զարգացման խանգարում ունեցող անձանց պետական խորհրդից (State Council on Developmental Disabilities, SCDD): Զարգացման խանգարում ունեցող անձանց սոցիալական ապահովության վարչությունը (Department of Developmental Services, DDS) մեզ խնդրել է հարցազրույց անցկացնել այն մարդկանց հետ, ովքեր ծառայություններ են ստանում Ձեր տարածքային կենտրոնից: Այս հարցազրույցը նախատեսված է հիմնական ազգային ցուցանիշների (National Core Indicators, NCI) հարցման համար: Ձեր ծառայությունների մատուցման համակարգողը տեղյակ է, որ մենք Ձեզ զանգահարելու ենք:

- Ձեր պատասխաններն օգտագործվելու են ողջ նահանգի տարածքում ծառայությունները բարելավելու համար:
- Ողջ տեղեկատվությունը գաղտնի է պահվելու, իսկ Ձեր կոնկրետ պատասխանները **չեն** տեղեկացվելու Ձեր ծառայությունների մատուցման համակարգողին:
- Հարցազրույցը կպահանջի մոտ 45 րոպե, իսկ հարցազրուցավարը կարող է գալ Ձեր տուն, Ձեր աշխատավայր կամ թերապիայի վայր կամ հանդիպել Ձեզ համայնքում:
- Հարցազրույցին մասնակցելը կամավոր է: Եթե չեք ցանկանում մասնակցել, այդ մասին կարող եք հեռախոսով տեղեկացնել հարցազրուցավարին:
- Հարցազրույցը թեստ չէ և չկան ճիշտ կամ սխալ պատասխաններ:
- Հարցազրուցավարը Ձեզ կզանգահարի հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում՝ Ձեր հարցազրույցի օրը նշանակելու համար:
- Եթե ցանկանում եք տեսնել այն մարդու նկարը, ով պետք է այցելի Ձեզ, սկանավորեք ստորև QR կոդը կամ այցելեք **scdd.ca.gov/interviewer-photo-gallery** և մուտքագրեք գաղտնաբառը **2024IPS**: Հարցերի կամ կայքի հետ կապված խնդիրներ ունենալու դեպքում խնդրում ենք զանգահարել **(714) 558-4421** հեռախոսահամարով:
- Եթե ունեք ցանկացած այլ հարց, խնդրում ենք զանգահարել կամ կապվել էլ. փոստով

Հարգանքներով՝

Որակի գնահատման նախագծային խումբ